

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^ր ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 12

22 ՄԱՐՏ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար հառաւել զրո. եւ գաւառներուն համար յիսուն զրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ժրանք կամ 5 բուլղի: Թղթաստրական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած ըսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկեկաթողութեան չեն առնուի:

Հատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-ԲԷ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعلايه غلطه (ماسيس) غزتي ادارى

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաբիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԲՈՒՈՐ ԵՐԱԽԱՅՔ ԵՎ ՆԱԽԱՅ ԿԸ ՀԱՆՆԵՆ

Եսիկայ որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ չատերը՝ սաստիկ ցաւօք և անհանգստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



SCOTT'S EMULSION

որնոր ահալայ հանած ատեննին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ զանոնք կը փրկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարեւոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանոնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թո՛ղ Ձեր զաւակները առողջ և զօրաւոր մեծնան շնորհիւ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ:

Բոլոր բեղաւորութիւնը և բեղաւորութիւնը կը ծախեն:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

24

ՏՈՒԹ. Ե. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ, կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով և խնամով, ստամոքսի, ալեայ, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային ակարութիւնները, դադղիական ախտերը (սիֆիլիս և այլն) և մորթի հիւանդութիւնները: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բիւզանդեան Գրասան, Ղարաքիա, Սեղբոս խան, Թ. 5-7:

Յ. ՎԱՍԻԼԵԱՆԻ չորս տեսակներու մէջ ամփոփուած Գրաւարժութեան նոր դրութիւնը հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ դրավաճառաց:—Դին հատին 20 փարայ:

ԹԵՅ

Ընտիր

ԹԵՅ

Հոտաւետ

ԹԵՅ

Խնայողական



Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը թէ՛ պատրաստ և թէ՛ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյներով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ թէյի նոյն իսկ էն խտապահանջ սիրահարներու: ԵՍՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի զաւանդներու հետ և յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր, ու հոտաւետ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը, ճէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճօն միջերը մը:

ԱԺԱՆ ԱԺԱՆ ԱԺԱՆ

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

22 ՄԱՐՏ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին դեմքեր. Յովն. Չամուրճեան Տերոյեմց. Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ:—Երկու գերեզմանները (Նորավեպ) ԳՐԻԶԱՆԹԷՄ:—Գրական աշխարհէն. Թարգմանութեան մը առթիւ. ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ:—Բննասերները (Բ. եւ վերջին մաս) ԳՐ. ՄԱԼԽԱՍ:—Հիւանդանոցին նուագահանդեսը. ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ:—Պատկերներ գաւառի կեանքէն. ԳԵՂԱՄ:—Խմբագրական Նօթեր:—Ոսանաւորի Մրցումը:

ՀԻՆ ԴԵՍՔԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ - ՉԱՄՈՒՐՋԵԱՆ - ՏԵՐՈՅԵՆՅ

(ՊՐՈՒՍԱՅԻ)

Որ 1857էն ետքն ընդհանրապէս կը ստա-
րագրէր Յովն. Պրուսացի Տէր Կարապետեան
Տէրոյեմց--19րդ դարու Թուրքահայոց բազ
մահմուտը՝ ծնաւ 1801 օգոստ. 7ին ի Պրուսա:

Իր սկզբնական ուսումն առաւ Պրուսայի
մէջ՝ Գարաբոյ Պօղոս Եպիսկոպոսի խտտակը-
թոն առաջնորդութեան տակն. ապա երթեւե-
կելով նոյն քաղաքին խաղական հիւպատո-
սարանն ուսաւ ինքնաշխատութեամբ խաղա-
րէն ալ, ինչպէս քիչ ետքն յունարէն եւ արաբե-
րէն ու պարսկերէն՝ յաճախելով հմուտ Յոյնե-
րու եւ օտար կրօնաւորներու քով: Իր սուր եւ
երկիւղած միտքը՝ լծորդուելով այս նախնա-
կան աշխատութեանց՝ պատրաստեց զինքն
ապագայ լայն եւ տարօրինակ գործունէու-
թեանց: Անցաւ ապա Արմաշի վանքը. հոն
երէց դասակցութեամբ Աղաւնի Ստեփանոս եւ
Պօղոս Թաքթաքեան Պրուսացի վարդապետ-
ներուն (երկօքին ապա Պատրիարք Կ. Պո-
լիսի) աւելի հմտացաւ նախնեաց մատենագ-
րութեանցն ու աստուածաբանական գիտու-
թեան, որ միանգամայն փիլիսոփայութիւնն
էր ժամանակին:

Բիչ ետքը՝ վերադառնալով Երուսա, իր

քաղաքը, եւ սկսաւ հոն գտաւիստել ու թարգ-
մանել: Այսպէս քանիցս եկած զացած է
Պրուսա, Արմաշ, Ատաբաղար՝ մինչև որ 1828ին
առաջին անգամն ըլլալով եկաւ Պոլիս ա-
րեւելեան շատ անշուք հանդերձանքով մը,
ու զրական վիճաբանութեան մը առիթով
ցուցուց իր խնայական բացառիկ կորովն ու
հմտութիւնը ու թարգմանեց զեղեցիկ դրա-
բառի ժընէվցի փիլիսոփային իմաստասիրա-
կան մէկ գործը: Իրրե թարգման՝ ծառայեց
նախ ի Պոլիս Խիւսրէվ Մէհմէտ փաշային,
որ մասնաւոր համակրութեամբ մը կը վերա-
բերուէր իրեն. Պալեանց թեւարկութեամբ
բացուեցան ապա իրեն կարեւոր պաշտօններու
գումաները:

Մինչև 1841 թէ՛ իբրեւ վարիչ (recteur)
թէ՛ իբրեւ բարձրագոյն գտաւիստ ու մատե-
նաթարգման պաշտօնավարեց Սկիւտարի ճե-
մարանին մէջ եւ հասուց երեք չորս նշանաւոր
աշակերտներ—Կ. Ս. Իւթիւճեան, Ստեփան
փաշա Արսլանեան, Մարտիրոս Թոքաթեան
(1846ին) եւ կողմնակի խ. Պ. Մխաբեան,
որուն բանասիրական բերմանց կ'առաջնորդէր
բարունաբար:

Ապա՝ ձեմարանին առաջին փակումին վրայ երեք չորս տարիի չափ տուաւ ինքզինքն առանձնական դասաստութեանց, թարգմանութեանց և մատենագրութեան. այդ միջոցին հրատարակած է ձոյայի Գաղաքավարութեան և հատոր ռամիկ թարգմանութիւնը, աշխարհարաւ Հնախօսութիւն մը, Հաղորդութեան և Մկրտութեան վրայ և հմտալից գրքոյի. նոյն միջոցին նաև թարգմանած է 8 օրուան մէջ Պէշգ Բասկալի սուր խորհրդածութիւնները՝ ատենին հասկնալի ոճով և կրօնական ու խորական պատշաճեցումներով ու յապաւումներով, զոր հարկ կը դնէր իր վրայ ժամանակին զգոյշ ոգին:

1846ին՝ ձեմարանի վերաբացման՝ սկսաւ նորէն պաշտօնավարել հոն իբրև Տնօրէն ու բարձրագոյն դասախօս. քիչ ետքն է նաև որ սկսաւ հրատարակել Պատրիարքարանի ծախքով Պոլսի անդրանիկ հայ լրագիրը կանոնաւոր, որ 1848ին անցաւ ուրիշ խումբի մը (Սէրվիշէնի, Գրիգոր Աղաթօնի, Ն. Զօրայեանի) և 1850ին անցաւ նորէն Տէրոյ յենցի խմբագրապետութեան մինչև 1852, երբ այդ լրագիրն ա'լ վերջնականապէս փոխուեցաւ Մասիսի:

Իր այդ թերթին աչքի զարնող հանդամանքն է սեղմ ոճ և հմտութիւն առատ՝ հայ եկեղեցիին ու աւանդութեանց սպասարկելու տիրող ոգիով, վաճառելի ինչպէս կը սիրենք հաւատալ՝ այդ օրերէն Տէրոյենցի անխախտ սկզբունքն եղած էր հաւատարիմ մնալ յամենայն հին աւանդական ոգիին՝ դիմագրելով մէկ կողմէն փրանսական կտրի՝ արձակ նոր դադափարներուն և միւս կողմէն բողոքականութեան նորասկիզբն յորձանքին որ հին դրութեանց զեղծումներուն հակադրօթեամբ սկսած էր արշաւել՝ մինչև հակոտնեաներէն՝ Թուրքահայոց վարանոտ մասին մէջ: Այդ թերթին մէջ ունեցած է նաև Շահնազարեան Կարապետ վարդապետի հետ վիճաբանութիւն մը Փաւստոս Բուզանդի յոյն թէ հայ ըլլալուն վրայ, և Պոսեյի բանասէրք իրեն տուած են իրաւանց քուէն:

1848ին՝ Հռոմի նուիրակ Ֆէրիէրի Կարապետին հետ՝ Տառեան Պօղոս պէյի տունն

ունեցած է Հայ եկեղեցիին վրայ խիստ չափեկան և նրբախնդիր տեսութիւններ մը, որ տպուած ալ է Ա. Պէրպերեանի Տարեգիրքին մէջ: Ունեցած է դարձեալ Շահնազարեան Կարապետ վարդապետին հետ՝ թելադրութեամբ Ներսէս Ե. Կաթողիկոսի, Յովհ. վարդապետ Սեթեանի և համախոհներուն՝ Գաւառակիին և ուրիշ աւանդական խնդիրներու վրայ առանին կնճռոտ վէճ մը, որ հրատարակուած է բաւական այլագրութեամբ 1875ի Արեւելեան Մամուլներուն մէջ:

Ապա սկսած ու շարունակած է հետզհետէ մինչև 1865 Զոհալ ու Սեւակ հանդէսները նոյն աւանդապաշտ հին ոգիով և իրեն միայն յատուկ մանրամասն ոճով ու սուր տրամաբանութեամբ մը. այդ հանդէսներուն մէջ կը դառնային ընդհանրապէս եկեղեցական, հնախօսական, կրօնապատմական ներհուն յողուածներ՝ ժողովրդական շատ պարզ լեզուով, այլ հարազատ աշխարհաբառով մը:

1861—64ին ջերմ պահպանողական՝ ջատագով և հրապարակային փաստաբանն եղաւ խաւաքեալ կողմին ու Երուսաղէմի վանքին, և սկսաւ գրել՝ Պալեան Կարապետ Ամիրայի դրամական խրախուսանքով՝ եկեղեցական պատմութիւն մը, զոր շարունակեց ցմահ մինչև ի 28 հատորը: 1868ին հրատարակեց իր Իրաւախոհներուն Ա. հատորն ընդդէմ Վիեննայի Միութարեանց ջոջ միաբան Հ. Յովսէփ Գաթրճեանի Հիմնական արբերութիւն անուն խորական գիրքին, և հետզհետէ շարունակեց մինչև երրորդ հատորը, որոնց մէջ ջանաց ապացուցանել թէ հայ և հոռմէական եկեղեցիներուն տարբերութիւնն իմնական չէ՝ այլ դուռ ծիսական և բաւական: Միակ Ա. տետրով մը պատասխանեց ասոր Հ. Գաթրճեան՝ անաչառ պատուադրութեամբ մը անուններով զՏէրոյենց «Կաթողիկ եկեղեցիէն դուրս միակ Հայը, որ ցարդ անհաւատարկի մնացած է հոռմէական ու արեւելեան եկեղեցիներուն պատմական հմտութեանց մէջ» (*):

1875էն ետե քաշուած գրական հրապա-

(*) Տե՛ս Կեղծիք իրաւախոհի Տետր. Ա. տպ. ի վանս Միութարեանց Վիեննայի:

բակէն՝ նուիրեց իր կորովի ծերութիւնն իր եկեղեցական մեծ պատմութեան կատարումին և անդադար ընթերցանութեանց՝ օրինապահ կրօնակեցութեամբ մը, յորում կնքեց իր մահ-կանացուն 1888 յունիսի 24ին ի Սկիւտար:

Սո՛ւր, անխո՛նջ, կրօնակա՛ն ու աստուածաշնչակա՛ն միտք մը՝ Յովհ. Տէրոյենց 19րդ դարու առաջին երեք քառորդին ամէնէն բազմամուտ և սկզբնատալ լուսաւորչական Հայն է, որ կրցած է՝ գէթ իր գլուխին մատեան քառսին և քրիստոնէական ճկուն արամարանութեանը մէջ՝ հաշտեցնել կրօնքն աշխարհական մատենագրութիւնն ու կենցաղն և փիլիսոփայութիւն մը աստուածաշնչական: Զգած է մեծ ու փոքր 150 հատորի չափ գործ՝ մեծ մասով աշխարհաբառ եւ ձեռագիր, որոնց գլուխն է իր եկեղեցական պատմութիւնն աստուար՝ ի պահ դրուած երուսաղէմի Պատարարքական թանգարանը:

Իբրեւ փորձանիշ իր մատենագրական մեծութեան և արեւելեան անսեթեւեթ համարձակաստութեանն ու անդրդուութեան՝ ունեցած է շատ հակառակորդներ, մանաւանդ բողոքականներու և ազատախոհներու մէջէն, որոնք անխնայ հարուածած են մինչև իր մեկուսացեալ ծերութիւնն անդամ, գլխաւորապէս 1860էն առկին: Բայց ինք միւս կողմէն փոխարինուած է Թուրքահայ մեծամեծներէն՝ մանաւանդ եկեղեցականներէն՝ բացառիկ յարգանքով մը:

Այս ներհակներուն մէջ՝ իր քրիստոնէական ու վանական խիստ նախակրթութիւնը ունինք պատճառներ այսպէս կարծելու) կըրցած է աննկուն անհպարտ և անյողդողդ պահել զինքն իր աղմկեալ գործունէութեանց ատեն, որ իրն առ հառարակ կր կրէն պարզ կնիք մը խորունկ: Միջա՛կ է իր ոճը, անսեթեւեթ՝ ալ ներկուռ: Գիտէր 10է աւելի լեզու. կարդացած էր կ'ըսեն 5—6000 գիրք, զորս մեծ մասամբ իւրացուցած էր իր զարմանալի յիշողութեան ոյժով: Զգած է շատ աշակերտ ու հետեւող՝ մանաւանդ եկեղեցականներուն և գաւառացիներուն մէջ:

Այս ամէնուն վրայ իր մասին չեչուելի մանաւորութիւնը ու՛ է՝ որ ո՛չ ոք իրեն չափ պաշտպան ու փաստարան կեցաւ տո՛հ

մայլին ընտանեկան ու կրօնական պատուոյ և բարոյականի, և ո՛չ ոք իրեն չափ մատենագրեց ի նպաստ անոր՝ կուսակցութեանց միջոցին իսկ միշտ ի թեր անոր լարելով իր կողմն ու կորովը:

Անշուշտ ծերութիւն մը և անխառնակ վախճան մը աղքատին՝ վերջին պերճախօս վկաներն են իր այս քրիստոնէական նկարագիրին:

Իր ճոխ մատենագրանը, ուր կը գտնուէին եւրոպական հազուագիւտ մատեաններ ու հայ ձեռագիրներ, նուիրուեցաւ Արմաշի վանքին: Իսկ իր հեղինակած ձեռագիրներուն մեծ մասը կը գտնուի անդին առ զին բանասէրներու գրաստունները:

Ըսե՛նք վերջապէս վերջին բառն ալ՝— հայ Դպրութիւնը դեռ չէ ունեցած, քանի մը մեծ Մխիթարեաններէ զատ, Տէրոյենցի չափ թուղթ սեւցունոյ գրագէտ, իսկ անոր չափ թուղթ դարձունոյ՝ թերեւս ալ ընտելւափ ունենալ:

Յ. Գ. ՄԵՄԸՐԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԷ ԱՌԹԻԻ

“ՄԱՍԻՍ, Ի ՆՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԵՐԱ, 20 Մարտ 903

Ազնիւ բարեկամ,

«Մասիս»ի վերջին թիւին մէջ հրատարակած էիք, Պ. Էթ. Ֆլաթէի կողմէ կատարուած «Թրթուռներ»ու թարգմանութիւնը: Հաճելի անակնկալ մըն էր արդարեւ անկիայ, ձեր ընթերցողներուն և մանաւանդ՝ Օր. Մառի Յովհաննէսեանին ալ համար:

Եւ սակայն, այն գրուածքը խիստ անախորժ տպաւորութիւն մը ըրաւ իմ վրաս, որովհետեւ իսկոյն տեսայ անոր մէջ ֆրանս. լեզուի և տաղաչափական կանոններու հակառակ մէկ քանի կարկառուն թերացումներ որոնք՝ անուշադրութեան կամ տապալրական սխալներու չքմեղա՛նքն ալ չեն կրնար ունենալ, գծաղղարար:

Մասնանիչ ընեմ նախ Ա. տողը. Je suis le beau de l'Océan որ բնա՛ւ (աղուորութի՛ւնն եմ ծովուն) չինչանակեր, մանաւանդ որ le beau երեք չը կրնար գրուել la beauté՛ն տեղ :

Վարը, (Անո՛ւրջն եմ ես աղուորին), թարգմանուած է. Je suis rêve de la beauté. Ո՛ւր է գացեր rêverին որոշիչ le յօդը... : եթէ je suis le rêve de beauté ըսէր, passe encore!, թերեւս բան մը նշանակէր :

Անցնելով մէկ երկու անյաջող բառերու կարգափոխութեանց (et du soleil l'intensité, եայն) վրայէն, կը յիշեմ լոկ incompatible — indescriptible և contractim — vibration բառերուն՝ իբր լծորդ յանդ՝ ցաւագին տկարութիւնը և կը դիտեմ ալ որ Պ. Յլատէ ֆրանս. տաղաչափական կանոնը չէ յարգած՝ երկու վանկ հաշուելով gran-di-ose բառը՝ որ երեք ոտք ունի, նոյնպէս Յ վանկ՝ contracti-on և vi-bra-ti-on բառերը որոնք չորսական ոտք ունին, իսկ har-mo-ni-eu-

sesը չորս վանկ հաշուած է՝ հինգի տեղ : Այս սխալով՝ Et d'harmonieuses vibrations տողը 8 վանկ ունի... և երկուք ալ աւելի :

Իսկ hiatusի եռապատիկ սխալ մըն ալ՝ Օրիորդին բացէն՝ ձօնուած քառեակին սէջ կը գտնեմ... ու շատ կը դարմանամ : O toi — amour, tu-es, et-effet չեչտուած ձայնաւոր գրերու հանդիպում (hiatus)ներ են զոր ո՛չ մէկ հմուտ ու պարտաճանաչ ֆրանսացի գրող չը գործածեր ոտանաւորի մէջ :

Այս առթիւ, փորձութիւնն ունեցայ ե՛ս ալ թարգմանելու «Թրթուռներ»ը ֆրանսերէնի, և ձեզ կը դրկեմ զայն, խնդրելով որ հրատարակէք՝ այս անգամ բնագրին հետ դէմ առ դէմ : — Թարգմանութեան մէջ՝ կ'ապահովեմ ձեզ որ գէթ լեզուի և տաղաչափութեան պահանքներ չկան : Եւ կը յուսամ թէ բաղդատութիւնը շատերուն շահեկան ըլլայ, և ոմանց՝ օգտակար իսկ... :

Չերդ

Ա.Ղ.ԵՐՍ. ՓԱՆՈՍՍԻԱՆ

ԹՐԹՈՒՐՆԵՐ

Ինչ որ պիտի բեր Անը՝
եթէ լեզու ունենար...

«Աղուորութի՛ւնն եմ ծովուն,
«Փրփուրներով ձիւնաքոյր.
«Հմայի՛նն եմ ես իրերուն,
«Վհիս, մափուր ու անդոյր :

«Անո՛ւրջն եմ ես աղուորին.
«Յաւերժութի՛ւնն եմ անհուն.
«Յո՛լի՛ն եմ, հո՛ւրի՛ն եմ արեւին,
«Բուրո՛ւմն եմ ես վարդերուն :

«Բիւրեղացումը՝ յուսի՛ն,
«Նուրբ, քափանցիկ, անըրկուն.
«Կախարդա՛նքն եմ խօլագին,
«Երազային բիբերուն :

«Աղօ՛քն եմ ես սրբութեան,
«Հոգիներու մէջ մափուր.
«Կապո՛յսն եմ ես անըրման,
«Եթերներուն բիլ ու լուռ :

«Ու անփոփումն եմ յոյսին,
«Հրմայիներուն քրքրուն.
«Դաւանակութի՛ւնն եմ լրոին,
«Անհիւր շուշան շունչերուն... »

ՄՍՈՒ ԵՌԱՆՆԵՐԻՍԵԱՆ

VIBRATIONS



Ce que dirait l'amour, s'il parlait! ...

Je suis la beauté de la mer
Neigeuse, écumante, en furie
Je suis le charme, l'attrait clair
Des choses, la paix attendrie.

De la beauté rêve vermeil,
Je suis l'éternité suprême;
La flamme et l'ardeur du soleil,
Et le parfum des roses même!

Je suis le cristal délicat
Du souvenir que rien ne fêle;
L'enchantement, le vif éclat
Dans une rêveuse prunelle... .

Je suis la fervente oraison
Qui vers Dieu des âmes s'élance;
Je suis le bleu de l'horizon,
Des firmaments pleins de silence.

Je suis la lumière des cieux;
Les charmes, vibrant en phalènes;
L'accord muet, harmonieux
Des pures et blanches haleines!... .

Alex. Panossian

ԵՐԿՈՒ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ

(ՆՈՐԱՎԷՊ)

Առ. Օրհորդ Մ. Մ.

Երկու հոյակապ, փառաւոր դամբարաններ, քովէ քով, ճեփ ճերմակ, Տօմինիկեան Հարց հին ու մին մատուռին կից պարտէզին ճիշդ մէջտեղը, ահա՛ ամենէն շատ ինչ որ աչքիդ կը դարնէ՝ երբ տեսնուելիք բաները փնտռելու կ'ելլես Ասիուքի մէջ, Վերին Եգիպտոս:

Այդ փոշոտ, հոտած, աղտոտ գիւղաքաղաքին մէջ ուր բանի մը մօտենալ, դաշիլ չես ուզեր՝ այդ կաշուն զազրութենէն ոչինչ հեռոյ չի տանելու համար, գիւղաքաղաք մը ուր եկած ըլլալուդ կը զղչես, այնքան դարչելի բաներու կը հանդիպիս հոն ուր մարդերը իրենց բնականօրէն սեւ մարմնոյն վրայ կը թողուն որ կեղտը իր մուրը աւելցնէ, ուր կիները կիսամերկ՝ իրենց հոտած կազմուածքին վերի և վարի մասերէն շատերը, դաշիր և անպատկառ անհոգութեամբ մը թող կու տան որ դուրս ցցուն իրենց պտտաւ պտտաւ և դարչահոտ կելապիւին ծակափքներէն դուրս և որ կանացի հրապոյրներէն միանգամ ընդ միշտ դարչելու գաղափարը կը ներշնչեն քեզի. տեղ մը վերջապէս ուրկէ ժամ առաջ փախչիլ կը մտածես, այդ երկու գերեզմանները ժամերով իրենց առջեւ կեցնել կուտան քեզի, իրենց հիւանալի կերտուածքին, փարթամ շինութեան և մաքուր, խնամեալ պահպանմանը համար:

Ճամբորդութեան մը միջոցին զիս առաջնորդող պէսկիին, այդ մահարձաններուն գտնուած եկեղեցին կը տանի զիս և ես ալ ամէն հոնկէ անցնողներուն պէս հիացումով դամուած կը մնամ այդ կրանիդէ և մարմարինէ չքեղաշուք և գեղակերտ շիրիմներուն առջև:

Ci git

Soeur Marie-Justine de Sacré Coeur
de la Mission Africaine

1857-1891

Եւ քարին վարի ծայր՝

La Vicomtesse Eulalie de Morfaix-Nisard
Միւս քարին տապանագիրն է

Ci-git

Père Joseph-Marie Adalbert.
de la Congrégation des Bons Pasteurs.
1844-1891

Եւ միւս գերեզմանին պէս վարի կողմը՝
Le comte Gaston-Louis de Malligny

Յիւնասական աշխուսակութեան պատկանող այդ երկու տարբեր անունները, հոս, Վերին Եգիպտոսի մէկ անկիւնը նետուած, քով քովի, դրեթէ զիրար գրկած, օհ, սովորական բան մը չէ այդ և այդ համբարները կարծես բան մը կ'ըսեն զոր ի զուր կը փնտռես հասկնալ:

Հանելուկի մը առջև կը գտնեմ ես զիս և ատոր լուծումը գտնելու համար քայլերս կ'ուղղեմ պարտէզին վարի կողմը ուր կը տեսնեմ ծեր, պեղարդ կղերական մը որ քրիզանթէմի ածու մը ջրելու վրայ է:

Իրիկուան դէմ է արդէն, և կիզիչ, խաժ արեւը հոնտեղուան քներուն, դանդաղ և հանդարտ կերպով անհետանալու վրայ է երկայն և վտիտ արմաւենիներու ետեւէն:

Չգուշաւոր և յարգալից կերպով կը մօտենամ Տօմինիկեանիս և չի խորհեցնելու համար ծերուկը, քաղաքավարօրէն կը բարեւեմ զինքը և խօսակցութեան մը ծայր տալու համար գաւաթ մը ջուր կը խնդրեմ իրմէ:

— Ամենայն սիրով, կը փութայ պատասխանել, և պաղ տեսակէն, զոր կը յուսափ գնահատել պիտի գիտնաք:

Գաւաթը իրեն վերադարձուցած միջոցիս.

— Հա՛յր, կը հարցնեմ, ձեր գերեզմանն ո՞րն է այս:

— Ոչ, պարոն, ասկէ կէս ժամ անդին մեր գերեզմանն ողնինք ճիշտ, Խպալներուն քովը:

— Հապա այս երկու գերեզմանները:

— Ձեր այդ հարցումին կը սպասէի, սովորած եմ ատոր, և ի՛նչ զարմանալի բան, ամէն անոնք որոնց ուշադրութիւնը կը գրաւեն այս շիրիմները, անպատճառ գաւաթ

մը ջուրով կը սկսին յագեցնել . . . իրենց հետաքրքրութիւնը . և քսան տարիներէ ի վեր Աստուած գիտէ որքա՛ն դաւաթ ջուր խրմ-ցուցած և որքա՛ն անգամ այս պատմութիւնը կրկնած եմ ամէն այն քուռիսներուն որոնք մեր այս խեղճ մատուռը այցելելու պատիւը բրած են մեզի :

«Քանի որ, Պարոն, կը հետաքրքրուիք այս չիրիմներով և կուզէք անոնց պատմութիւնը խմանալ, հաճեցէք նստիլ սա աթոռին վրայ և պիտի պատմեմ ձեզի՝ եթէ ձեր ժամանակը կը ներէ :

— Ծնորհապարտ պիտի թողուք զիս, յարգելի Հայր, և ներողութիւն կը խնդրեմ եթէ այս ձանձրոյթը կուտամ ձեզի :

— Ընդհակառակը հաճոյք մըն է այդ ինծի համար, կ'աւելցնէ քթախտի տուփին վրայ երկու մասններով թեթեւ հարուածներ տալէ ետքը :

— Կը հրամայէիք :

— Ծնորհակալ եմ, ո՛չ .

— Այո, սիրելի Պարոն, այս երկու քարերը ողբերգութիւն մը կը ծածկին իրենց տակ :

Ֆէլիքս և Պաւլինէի, Պօլ և Վիրգիլի պատմութեան պէս բան մը ըլլալու է, կը մտածէի ինքնիրենս, երբ քթախտէն պղտղունց մը քաշելէն ետքը, սուփը անհետացուց թեզանիքէն ներս :

— Սիրոյ պատմութեան մը վերջնակէտներն են այս դերեզմանները զոր կը տեսնէք, ըսաւ ծերունի Տօմիկեանը, սկսելով իր պատմութեան : Բարիդի էն բարձր ազնուապետականութեան պատկանող երկու հոգիներ են որ ատոնց տակ կը հանգչին : Սիրոյ երկու զոհեր որոնք ալիկոծեալ կեանք մը անցընելէ վերջ Բարիդի մէջ, եկան Վիրգիլ այս աւագուտ երկրին մէջ զուգադիպութիւններու ամենէն սուամաթիքովը :

Սէօն Մառի, Աստուած լուսաւորէ հոգին, Mission africaineի ամենէն բարի, ամենէն ժրջան և ամենէն գարծունեայ կրօնաւորուհիներէն մէկն էր որ տասնըհինգ տարիներէ ի վեր հոս զրկուած էր իրրե տեսչուհի այդ միաբանութեան Ասիութի մէջ ունեցած աղջկանց վարժարանին :

Հիմայ որ ա'լ մեռած է, կրնամ ըսել թէ երբեք կին մը այդքան գեղեցիկ եղած չէ : Հրաշալի կերպով աղուոր՝ Ռաֆայէլի գծած «Աստուածածին»ներուն պէս : Եւ ասոր հետ մէկտեղ հեղահամբոյր, անուշ, առաքինի և բոլոր հոգեկան առաւելութիւններով օժտուած : Այդ գթութեան յարկին հոգին էր Սէօն Մառի, կենսատու արեւը որուն ճառագայթներուն տակ կու գային ապաստանիլ Ասիութի բոլոր ընկեցիկ, աղքատ մանուկները որոնց համար ճշմարիտ մօրենական սէր մը կը տածէր հէգ մայրապետը :

Թախիծ մը սակայն, կնկիծ մը միշտ կը վարագուէր իր աղուոր աչքերը, ժպիտը խոյս տուած էր այդ թարմ շրթներէն և երբ լաւ մը դիտէիր զինքը՝ կը զգայիր որ այդ մանկամարդ աղջկան չուշանաթոյր մարմինն մէջ՝ Վիրաւոր, արիւնոտ սիրտ մը կար զոր ի զուր սպիացնել կը ջանար իր ուխտին նուիրած իր պարտականութեանց մէջ :

Մենասէր, մեղամաղձոտ, քիչիկ մըն ալ մարդատեաց, օրն ի բուն իր խնամքին յանձնուած մանուկներուն հետ կը զրաղէր և իր պարտաւոյ ժամերը կու դար անցընել հոս, ներսը՝ Աստուածածին պատկերին առջև ծընրադիր ազօթելով, ուրկէ կը հեռանար միշտ աչքերը արցունքոտ :

Բարիդէն ազգական մը գրած էր ինծի այդ կրօնաւորուհիին պատմութիւնը, զոր դուք ալ ինծի պէս սրտածմրիկ պիտի գտնէք :

Ս. — Ժէրմէն արուարձանին ամենէն հարուստ և ամենէն բարձր դասին պատկանող ազնուատոհմիկ տը Մօրֆէ—Նիդաւ ծովակալին միակ աղջիկն էր դերկոմսուհին Էօլալի որ իր անստգիւտ գեղեցկութեամբը, անուանովը, հարստութեամբը և հաղուագիւտ առաւելութիւններովը հիացում կ'ազդէր իր գտնուած շրջանակներուն մէջ : Դեռ քսան տարու չեղած՝ Պրանսայի ամենէն հին aristocratիս պատկանող երիտասարդներ կնութեան խնդրած էին զինքը, բայց օրիորդ տը Մօրֆէ միշտ մերժումով մը պատասխանած էր իր ձեռքը խնդրողներուն :

Հայրը ըմբոստացած սակայն իր աղջկան այդ անդբոյութիւն մերժումներուն հանդէպ և

կասկածելով որ մի՛ դուցէ թաքուն սէր մը ունենայ ներսիդին, զոր չի համարձակիր խոստովանիլ, անուշ խօսքերով հարցովործած էր օր մը աղջիկը որ խաբուելով այդ հօրենական թակարդէն, բացէ ի բաց յայտարարած էր թէ խենդի պէս կը սիրէ . . . Օրէրային թէնորը՝ հռչակաւոր ժիւօն, այն ատենուան թամանեօն :

Հարուածը ծանր եկած էր ծերունի հօրը որ չէր կրնար հանդուրժել որ Խաչակիրներու մէջ փայլուն նախահայրեր ունեցող աղջիկ մը սիրտը տար թէնօրի կտորի մը :

Այդ միամիտ խոստովանութիւնը սուղի նստած էր խեղճ աղջկան որուն համար կեանքը այլեւս տառապանք մը եղաւ սոսկ :

Գաւառին մէկ անկիւնը պառաւ հօրաքընով մը քով զրկեցին զինքը, դղեակի մը առանձնութեան մէջ մոռցնել տալու համար այդ քսան տարու աղջկան նորաբողոք սէրը :

Հայրը երես դարձուցած էր իրմէ և ընտանեկան գուրգուրանքին կամաց կամաց իրմէ խոյս տալը կը զգար Էօլալի, դառնացած և յուսահատ սրտով :

Ժիւօ, որուն անունը անշուշտ լսած էք, Պարոն, ինքն ալ իր կարգին ազնուականի դաւակ, եւրոպական համբաւ մը կը վայելէր 1875ի միջոցներուն :

Երիտասարդութեան ժամանակը հակում մը ունեցած էր թատրոնի կեանքին համար ուր կը մղէին զինքը իր հազուագիւտ ձայնը և արդիադի տաղանդը :

Սքալաի և Սան Բարլօի բեմերուն վրայ ահագին յաջողութիւն մը գտնուէն վերջը, վեց ամսէ ի վեր մեր Օրէրային առաջին թէնօր կարդուած էր տարեկան 150,000 ֆրանք թոշակով մը :

Իւկընճոնիւրու ներկայացման դիչեր մըն էր որ ժիւօ—այս ծածկանունը կը գործածէր թատրոնի կեանքին մէջ Տը Մայինեի կոմսը— առաջին անգամ ըլլալով նշմարեց պէնեուառի մը մէջ տը Մօրֆէ դերկոմսուհին : Այդ աղջկան արտասովոր գեղեցկութիւնը անմիջապէս ազդեցութիւն ըրաւ իր վրայ և երկրորդ արարուածին՝ արդէն խելապարօրէն սիրահարուած էր անոր :

Հեռեւեալ օրը, թատերական քրոնիկա-

դիրները միարեան կը խոստովանէին թէ երբեք ժիւօ այդ դիչերուան պէս en voix չէր եղած և երբեք այդքան ոգեւորութեամբ չէր կատարած իր դերը :

Երկուքին միջև թղթակցութիւններ, դադատագողի տեսակցութիւններ հաստատուած էին և երգումներ փոխանակուած :

Էօլալի՝ ժիւօինը պիտի ըլլար : Աւա՛ղ, սակայն, իրենց այդ աղուոր ծրագիրը ջուրը ինկած էր այն օրէն որ ծովակալին աղջիկը անմեղունակ կերպով հօրը բացած էր իր սրտին դադանիքը :

.
Տը Մօրֆէ դերկոմսուհին յուսահատած, օր մը փափաք յայտնած էր կրօնաւորուն ըլլալ՝ մոռնալու համար այն սէրը որ զինքը կը մաշեցնէր, կը հատցնէր :

Հայրը հաւանութիւնը սուած էր ատոր և ահա՛ ինչպէս երբեմնի աշխարհիկ դերկոմսուհին դարձած եղած էր Սէօն Մառի, դարձեալ աղուոր իր բուրդէ հաստ չըջաղգեստին մէջ և ձերմակ cornetteին տակ :

Դերկոմսուհին այդ ուխտին մէջ մտնելու լուրը Ֆիկաւօի մէջ երեւցած օրն իսկ, ժիւօ հրաժարականը կը զրկէր Օրէրայի Տընօրէնութեան և երկու օր ետքը ինքն ալ Լիօնի մէջ կ'ընդգրկէր կրօնաւորի ասպարէզը, քահանայ ձեռնադրուելով Bon Pasteurին ու միաբանութեան մէջ :

Բարիգեան լրագիրները օրերով զբաղած էին այս սիրային խնդրով և կ'ըսէին թէ Վէրտի այդ հովուերգութեան վրայ յօրինած է իր Forza del Destinoն :

Տարիներ անցեր էին այդ թուականէն ի վեր, երբ Սէօն Մառի հոս զրկուեցաւ իրրեւ աղջկանց վարժարանին տեսչուհի, ինչպէս քիչ մը առաջ ձեզի ըսելու պատիւը ունեցայ :

Գիւղաքաղաքիս այս աղտոտ միջավայրին մէջ երկնառաք հրեշտակի մը դերը կատարեց Սէօն Մառի այն վեց տարիներու միջոցին զոր մեղի հետ հոս անցուց :

Սմէն կիրակի առաւու երբ իր աշակերտուհիները եկեղեցի կը բերէր, աչքիս պոչովը կը դիտէի զինքը և կը հիանայի իր ջերմեռանդութեանը վրայ : Գլուխը աղօթարանին յեռած՝ մինչև վերջը կ'աղօթէր չարունակ :

Յառաջի բան մը սակայն խմացած էի իր վրայ : Իսպալացի ծեր բժիշկ բարեկամ մը, — հոս գանձուող միակ բժիշկը — խօսակցութեան մը միջոցին սա պէս բան մը ըսած էր իր վրայ :

— Այս մարապետը երկար կեանք չունի, թոքերը հատած լմնցած են, մե'ղք պիտի ըլլայ :

Այս յայտնութիւնը չէր դարմաններ զիս, քանի որ այդ աղջկան պատմութիւնը ծանօթ էր ինծի :

Երկար չընեմ, Պարոն, իրիկուն մը մութ ստոն մեր այս խեղճուկ եկեղեցիին դուռը վարնուեցաւ :

Հապճեպով վաղեցի բանալու և դէմ առ դէմ գտայ ինքզինքս ճամբորդ քահանայի մը :

Bon Pasteur՝ ներու կարգէն էր այցելուն որ երկու օրուան հիւրընկալութիւն խնդրեց ինձմէ դէպի Աստուան իր ճամբորդութիւնը կարենալ շարունակելու համար :

Սիրով ընդունեցի իր խնդիրքը, մանաւանդ որ միշտ հաճոյք կը պատճառէին ինծի այցելութիւնները այն ամէն կրօնաւորներուն որոնք առանց զիս անանելու հոսկէ չէին անցներ :

Հայր Ժօզէֆ — արս էր հիւրիս անունը — համակրելի դէմքով, բարեկիրթ շարժումներով, թովիչ խօսակցութիւն ունեցող քահանայ մըն էր որ անմիջապէս համարումս գրաւեց և չնորհակալ եղայ իրեն որ ազնիւ և բանդէտ եղբօր մը հետ երկու օր միասին անցընելու բաղդին կ'արժանացնէր զիս :

Իմ աղքատիկ ընթրիքիս վրայ աւելցուցի ինչ որ պահճու ունէի մառանիս մէջ և ամենէն հին դիմիներէս չիլ մը բացի ի պատիւ մեր նորահաստատ բարեկամութեան :

Երկրորդ օրը կիրակի էր : Առտուան «Թիւ պատարագ» ընալ ինքը մատուցանել խնդրեցի իրմէ, ինչ որ յօժարութեամբ ընդունեց :

Պատարագը աւարտելուն, ինծի մօտեցաւ և գունաթափ դէմքով ու խեղդուկ ձայնով մը խնդրեց որ երկրորդ պատարագը ձայնաւոր ընենք :

— Բայց արիւցու չունինք և երգեհոնը վարնող չկայ, առարկեցի իրեն :

— Ստոնք ինծի թողուցէք, ըսաւ, ևս երկուքին ալ կը համարմ :

— Շա'տ լաւ ուրեմն, պատասխանեցի իրեն և քառորդէ մը ետքը պատարագը սկսայ :

Նէրեցէք, պարոն, կ'ըսէ ինծի ծերուկ պատմիչս, որ վայրկեան մը կ'սնդ առնեմ, պատմութիւնս շարունակելէ առաջ :

Եւ այս աղգարարութիւնը ինծի ընելէ վերջը, կրկին կը դիմէ քթախոտի տուփին և կարմիր մեծ թաշկինակին :

— Կեանքիս մինչև վերջի վայրկեանը պիտի յիշեմ այդ պատարագը : Յուդիչ, աղէտաւոր պատարագ մը որուն յիշատակը ամէն անգամ պատմելուս տակնուվրայ կ'ընէ ներսիդիս և հակառակ անկէ ի վեր տասը տարիներ անցնելուն, միշտ արցունք մը կը կորուզէ այս չորցած աչքերէս :

Այո, պարոն, պատարագի սկսանք թէ ոչ, թէնորի սքանչելի ձայն մը փրթաւ վերէն : Ինքզինքս կորուսի, հաւատացէք պարոն, ևս ատանկ ձայն լսած չունէի բնաւ, և ըսե'լ թէ աշխարհական եղած ատենս քիչ մը քիչ թատրոններ յաճախած չեմ :

Այդ ձայնին անուշութիւնը, փայլը երբեք չպիտի մոռնամ :

Աստուածային, դերմասկան բան մը կար անոր մէջ որ մինչև հողիդ կը թափանցէր :

O Salutaris՝ Ժամանակ՝ ինքզինքս չի կրցայ բռնել և ետիս դարձայ :

Գերմարդկային ձայնով մը կ'երգէր զայն Հայր Ժօզէֆ :

Յանկարծ աղմուկ մը ուշադրութիւնս կը դարձընէ այն կողմը ուր սովորաբար մարապետները և իրենց աշակերտուհիները կը կենան :

Արտասովոր բան մը կը դառնար կոր այդ հատարաններու կարգին մէջ : Զիրար կը հըրմըշէին, աթոռները կը վերցնէին, աշակերտուհիներէ ոմանք դուրս կը վազէին և միւսները՝ պզտիկ, վախցած թուշտներու ձիջերով իրարանցումի մէջ էին, չըջապատելով աղօթարան մը որ քոյր Մառիինն էր :

Վերէն ա'լ ձայն չէր դար, երգեցողութիւնը խանդարուած էր և պատարագս լսողներով չխտակ վաղեցի վար :

Տեսարանը անսկարագրելի է : Աղջիկները բարձրաձայն կուլան , մարապետները գետին կծկուած դարմաններ կը հասցնեն Սէօն Մառիի որ նուազած է :

Անմիջապէս բժիշկին լուր կը զրկեմ որ տասը վայրկեանէն կը հասնի եւ մարապետին բաղկերակը քննելէ ետքը ճերմակ դուլսը կը դարձնէ ինծի եւ մեզմ ձայնով մը .

—E finita .

Սէօն Մառի կաթուածահար եղած էր իր սիրականին ձայնէն :

Յաջորդ առտուն Հայր Ժօզէֆը կախուած դառայ իր մահճակալէն :

Հետեւեալ տոմակը սեղանին վրայ .

«Բովէ քով թաղեցէք զմեզ»

—Աւասիկ , պարօն , երկու գերեզմաններուն պատմութիւնը :

ԳՐԻԶԱՆԹԻՄ

ՔՆՆԱՍԵՐՆԵՐԸ^(*)

Կեանքի տարրական դասերէն մէկն է , շատ դաւանութեամբ սորվուած—յոյս ունենանք որ հաստատապէս պիտի տպաւորուի մեր Երկրորդական Դաստիարակութեան մէջ—թէ ճշմարտութեան վրայ մեր ունեցած սուսութիւնները նոյնը չեն՝ ինչ որ է բուն ճշմարտութիւնը .—Թէ մարդու մը կարծիքները շատ փոքր կարեւորութիւն ունին , բացի ան պարագայէն՝ ուր ինքն ալ կը դատէ ան բաներուն յարաբերութիւնները՝ յաւիտենական մեծ եղելութիւններու հետ , որոնք գեր ի վեր կը մնան մարդկային հեղինակութենէն : Քննասիրութիւնը—երբ Նան է անոր վարիչը—պարզապէս կ'ըլլա : ողորմելի ճամբարտակութիւն մը . քննասիրական միտումը՝ երբ անհատի մը մէջ կը դաւնայ պարզապէս հաւանելու կամ չհաւանելու գործի , նախապատուութեան կամ կանխակալ մտքի վէճի մը , ոչ մէկ բանի մէջ այնքան վեհա չհասցնելու որ իշխան քան այն մարդուն կամ կնոջ որ սաստիկ սէր ունի այդ միտումին :

(*) Շարունակութիւն Մասիսի նախորդ թիւէն և վերջ :

Պարբերականի մը նշանաւոր խմբագրապետը կը գրէ Ուօրածվորի վրայ , ⁽¹⁾ .

—«Այս բնաւ չյարմարիր»—Բայց իր քնննադատութիւնն ալ իր սահմանած պայմաններէն կամ վերապահումներէն անդին չանցնիր : Who killed John Keats?

I said the Quarterly .

(Ո՛վ սպաննեց ձօն Քիցը : ⁽²⁾ Ես , պատասխանեց Նուամետայ Հանդեսը : Բայց , ինչ եղաւ արդարութեան պաշտօնեային (Croner) քննութեան վճիռը : Ան եղաւ որ՝ վարդապետական (ipse dixit, այսինքն dogmatique) ոճը վերջ ի վերջոյ անիշխանութիւնն առաջ բերաւ : Եթէ կարելի ըլլար կրկին գտնել Միլթընը ⁽³⁾ Չէլֆօնթի⁽⁴⁾

⁽¹⁾ Ծ . Թ . Ուօրածվորի :—Մեր դարուն էն մեծ բանաստեղծներէն մէկը (1770—1850) , և Գօլբիճի ընկերը : Գաղափար ունեցաւ վերանորոգելու անգլիական քերթողութիւնը , և անչափ շատ եռանդով աշխատեցաւ մաքրելու համար դայն ապականած և մոտի աշխմատութիւններէ , որ չափազանց հեռու գնաց իր դրութեամբը և ընդունեցաւ քամահրանք ու ծաղրանք : Ունեցաւ սակայն բազմաթիւ համակրողներ՝ որոնք խրախուսեցին զինքը : Երկասիրութիւնները բազմաթիւ են : Իր հանճարովը էն նշանակելի յաղթանակը տարաւ Էտիմպրըի պարբերականին վրայ՝ որ էն առաջ ծաղրած էր զինքը : Ուօրածվորի միտքն ու գաղափարը վերջապէս գերիշխան տիրեց ան պարբերականին ուղղութեանը վրայ :

⁽²⁾ . ձօն Քից :—Երիտասարդ բանաստեղծ , (1796—1820) : Այդ Նուամետայ Հանդեսին մէջ՝ Կիֆֆըրտ մեծ կոպտութեամբ վարուեցաւ անոր քերթուածներուն նկատմամբ : Քից , շատ զիւրազգած , սրտաբեկ եղաւ , և առողջութենէ ալ տկար ըլլալով , թոքային չարաչար հիւանդութեամբ մը մեռաւ Հոտի մէջ՝ ուր գացած էր մեղմ կլիմայի տակ ապրելու համար :

⁽³⁾ . Միլթըն .—1608—1684 :

⁽⁴⁾ . Չէլֆօնթ .—Պըքլինկէմօյրի մէջ՝ ուր գնաց Միլթըն 1666ին , խոյս տալով Լօնտրայի ժանտախտէն՝ որ անկարելի ըրած էր Դրալս Կորուսեալին հրատարակութիւնը :

մէջ՝ որքոն ջերմ եռանդով պիտի ունկընդ-
րէինք անոր բերնէն ելլալիք միավանկ մէկ
վճռին իսկ . և ինչեւ պիտի չտայինք լսելու
համար Շէքսպիրի ⁽⁵⁾ վիճաբանելը—իրեն անձ-
նական աշխոյժին մէջ իսկ—Պրատնինկի ⁽⁶⁾
կամ Շէլլիի ⁽⁷⁾ վրայ : Բայց , ընդհանուր կեր-
պով՝ լաւ է որ նուազ կարեւոր մարդիկ ըղ-
գուշանան վճռողական բառերէ :

Դեռ աւելի վստահաւոր է ան քննադատը՝
որ կը կործանէ դարու մը գաղափարական-
ները (ideals) : Ստորին համոզումներու ծա-
ռայող մէկէ շատ աւելի մարդիկ ներքի մե-
սկեցին ապաստանիլ փոփոխութեան վախին
հետեւ , ինչպէս պիտի պատմեն ձեզի Իսաւրիոյ
քահանաները : Ուրիշ ի՞նչ կերպով կրնանք
մեկնել այն երկարատեւ յարգը՝ զոր վայելեցին
իրենց արտեւանութեան ստէպ ստէպ քթթող
Տիրամօր Պատկերները , կամ խարդախներու
եղբայրակցութեան Ժպրտութիւնը բազմա-
թիւ խաբեկատիր աւանդութիւններ քաշքու-
տուելով իր ետեւէն , անարդէլ , առանց բո-
ղոքի , որովհետեւ ճշմարտութեան մաս մը

(5) . Շէքսպիր :— 1564—1616 :

(6) . Պրատնինկ :—Նշանաւոր կին բանաս-
տեղծ : Տասը տարեկանէն սկսած էր շատ
գրել . քոսմին աշխատակցեցաւ արդէն պար-
բերականներու : Ռամկին լեղուով ու գաղա-
փարներովը գրած քերթուածները եղան սրբ-
տագրաւ և իմաստալից . իսկ իր անձին և
ղգացումներուն վրայ գրածները՝ ճապաղ և
անհասկնալի : Ժողովրդականութիւնը եղաւ
վազանցիկէ քիչ մը աւելի : (1809—1861) :

(7) . Շէլլի :—Էն նշանաւոր բանաստեղծ-
ներէն մէկը (1792—1822) : Կաղմութեամբ
չափազանց դիւրադգած : Ունի բազմաթիւ
երկասիրութիւններ և ողբ մը ձօն Բիցի
մահուան վրայ : Խոստմալից կեանքը կոնուէր
վերջացաւ : Առադաստանաւ մը փոթորիկէ
ընկղմելովը խեղդուեցաւ ծովին մէջ , Ի-
սաւրիոյ առջեւ , երբ կը մեկնէր Լիւօրնոյէն ,
երթալու համար Սէնթ-Արէնկօ , իր տունը :
Դիակը գտնուեցաւ ծովեզերքին վրայ , և
այրուելով՝ ածիւնները թաղուեցան Բիցի
քով , Հոռոմի բողոքականներու գերեզմանո-
ցին մէջ .

խառնուած կ'ապրի անոնց հետ : Բայց , ան-
գրթաբար մթացնել և նիւթականացնել հա-
մայնքի մը հաւատքը՝ ոճիր մըն է այնքան
մեծ , որքան փառաբանել անոր նախապաշա-
րուսները : Բայց բաւական սկսուելու չափ
«տեղ և լուսանցք» կը մնայ հոս քննասիրու-
թեան . այս պարտի ըլլալ քննասիրութիւն մը
հիմնուած՝ ոչ թէ վերացեալ հայեցողութեան
կամ երեւակայութեան , կամ պարզ սկզբա-
տիկականութեան վրայ , այլ եղելութեանց
լրուարանութեանը վրայ . հարկաւորը՝ աւելի
յատակ գիտութիւն մըն է՝ որ կը բարձրանայ
անցողական մթութիւններուն վրայէն : Որով-
հետեւ ճշմարտութիւնը կը նմանի Կօլտմիթի ⁽⁸⁾
վեհ պատկերին մէջ նկարագրուած «բար-
ձրաձիգ Ապառաժ»ին .

—«...որ կը բարձրանայ իր ահարկու
ձեւովը , կուռի ձորին մէջէն , կէս ճամբան
կը թողու փոթորիկը . թէեւ իր լանջքին բո-
լորտիքը կը տիւուին թաւալգլոր ամպեր ,
մշտնջանաւոր արեւն ալ կանգուն կը կինայ
գաղաթին վրայ» : Եւ այն մարդոց՝ որ պիտի
նային դէպի վեր , երբեք պիտի չպակսի գա-
ղափարական մը :

Ներքի՛ է մեզի յանդգնութիւնն ունենալ
ախներեւ ճշմարտութիւն մը (truisme) առա-
ջարկելու և ըսելու թէ ինքնհատու (self-
assertive) միտքը չէ , այլ ողջաբառ միտքն
է որ կը յօրինէ քննասիրութիւնը , թէ՛ գոր-
ծերու կամ գիրքերու վերաբերեալ , թէ՛ մար-
դոց գործողութիւններուն կամ խորհուրդնե-
րուն վերաբերեալ խնդրոց մէջ : Բայց ողջ

(8) Կօլթմիթ .—Բանաստեղծ , պատմագիր
(1728—1774) Տօքթ . ձօնաբնի բարեկամը :
Բժիշկ ըլլալու նախադասմանուած , ուսումը
կատարած էր Համալսարաններուն մէջ , բայց
արտակարգ և անհոգ բնութեամբը , մէկ չա-
պիկով և առանց դրամի մեկնեցաւ , Եւրոպայի
չըջանն ընելու : հետիոտն : Առաջին քերթու-
ածը շատ դնահատուեցաւ , որուն համար
ձօնաբն ըսաւ թէ «Բօրի Ժամանակէն ի վեր
տեսնուած չէր այսքան գեղեցիկ բանաստեղ-
ծութիւն մը» : Պատմական գիրքեր , կատա-
կերգութիւն , եւ ուրիշ շատ գործեր ունի՝
որոնց մէջ Զինակաւն Նամակաւն :

դատողութեան տէր մարդն ալ կը կարօտի առատ ընկերարութեան : Պատմութեան հանելուկներէն մէկն է՝ անոր գրաւոր յիշատակութիւններուն խառնակ մնացած ըլլալը : Մարդու անկատարութիւնները իրեն հետ կը քաշքշուին բոլոր կեանքին մէջ, և այս ամենքան աղանդով է՝ որքան Ուօրթոքթօրթի գրած լեզուովը :

— «Երկինք մեր շուրջը կը փռուի մեր մանկութեան մէջ» : — Մարդուն խելքը սահմանափակուած է ամէն կողմէն : Չկայ մարգարէ՝ որ տեսնէ բովանդակ ճշմարտութիւնը, ոչ ուսուցիչ՝ որ համայն գիտութիւններով խնայողացած ըլլայ, ոչ բանաստեղծ՝ որ կարենայ դիմադրել արեւին, կամ ձեռքել ամպերը իր նուազկոտ թեւերով : Պէտք է որ մեր քննասիրութիւնը վերածուի Պրօգրուսոսի Անկողինին (9) : Թերացողներն են որ կը շահին բարութեան յաղթանակները : Ուղղափառը կրնայ վրիպիլ, հաւատացեալը կրնայ երկմարիլ : Փոյթեւանդը կրնայ մոլորիլ ագիտութեամբ, և դարձեալ՝ ունենալ կենսական ոյժ : Մոլորութիւնը սերմանուած է ճշմարտութեան հետ, ինչպէս որովոր ջրերն են հետ : Դարձեալ՝ յաճախ աւելի զօրութիւն կը գտնուի անկապ ճառի մը՝ քան խնամուած պերճախօսութեան մը մէջ : Աշխարհիս փոքր իւրերը միշտ կը շփոթեն մեծ գիտունները : Մեր միտքերուն այս շփոթ վիճակին մէջ՝ իմաստուն քննասէրի մը ընթացքը պարտի ըլլալ՝ խառնակէն պարզել և մէջտեղ հանել Ամենալաւը : «Որովհետեւ մասամբ գիտենք և մասամբ կը մարգարէանանք : Բայց երբ դայ

(9). Պրօգրուսոսի Անկողինը : — Պրօգրուսոս աւագակ էր հին Յունաստանի մէջ : Երկաթէ անկողինի մը վրայ կը դնէր իր բռնած մարդերը : Եթէ ասոնք աւելի երկայն ըլլային անկողինէն, կը կտրէր աւելորդ մասը. եթէ աւելի կարճ ըլլային, բռնի կը քաշէր մինչեւ որ չափին դային : Մարդերը մէկ օրինակի վերածելու, այսինքն՝ խորհելու մէկ կերպի կամ գործելու մէկ կերպի գիտաւորութեամբ եղած ամէն ճիգի համար կ'ըսուի : — «Պրօգրուսոսի Անկողինին վրայ դնել զանոնք» :

կատարեալը, ինչ բան որ մասնակի կատարեալ է՝ պարտի մէջտեղէն վերնալ» : (10)

Թարգմ. անգլիերէնէ Leisure Hour.
Դ. ՄԱՆԽԱՍ Թիւ Դեկտեմբերի 1902

ԿԻՐԱԿԻՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Հիւանդանոցի նպաստին տրուած նուագահանդէսները, տարուէ տարի, կ'առնեն հանգամանքը՝ նպաստի միջոց մը ըլլալէ աւելի՝ գեղարուեստական ճշմարիտ ցերեկոյթի մը, և կը ստանան, ամէն անգամ, կատարելագործութեան նոր փայլ մը :

Ասիկա, հետզհետէ, ինչպէս հայ հասարակութեան համար ընդհանրապէս, նոյնպէս քիչ մըն ալ օտար գեղարուեստասէրներու համար, կը դառնայ թուական մը, որուն իրական անձկութիւնով մը կը սպասեն :

Ասիկա ուրախառիթ երեւոյթ մըն է մեզի համար, քանի որ ծանօթ է թէ, մինչև հիմա ո'րչափ հեռու պահած ենք մենք զմեզ, դեղարուեստի մասնակցութիւններէ, և Հիւանդանոցի նուագահանդէսները կոչուած են գեղարուեստական ո'րչափ մեծ պակաս մը լեցնելու, մեր մէջը, հետզհետէ ընտելացնելով մեր համայնքը գեղարուեստի է՛ն հակա ճիւղին՝ երաժշտութեան մեծ վայելքներուն :

Եւ որչափ ալ եւրոպական երաժշտութիւնը տակաւին չխօսի մեր հասարակութիւնը կազմող ամէն խաւերու անհասներուն, յուսադրող է տեսնել որ, անոնք մասնաւոր հաճոյքով մը կ'ուզեն մասնակից ընել ինքզինքնին աս նուագահանդէսին վայելքին, որչափ Հիւանդանոցի պէս բազմակարօտ հաստատութեան մը նպաստած ըլլալու գովելի գոհունակութիւնով՝ նոյնչափ ալ և առաւելապէս, նուագահանդէսին գեղարուեստական հաճոյքներուն մասնակից ըլլալու իսկ փափաքով :

(10). Ներկայ յօդուածիս նախորդ մասին վերջին պարբերութիւնէն (էջ 170) պէտք է ջնջել — «կոչնչանայ» — բառը՝ որ սպուած է անուշադրութեամբ :

Ուրախաւիթ է նոյնպէս, միւս կողմէ, տեսնել որ, Նուազահանդէսին մասնախումբը, բուն զոհողութիւններով, ո՛չ մէկ ջանք կը լինայէ, լի՛ովին զոհացում տալու համար աղփափաքներուն, բան մը՝ զոր հասարակութիւնն ալ իրաւունքով կը սպասէ իրմէ :

Եւ ասանկ, Հիւանդանոցի նուազահանդէսները, հետզհետէ կը ստանան սիրուն նուրբութիւններ, առինքնող հրապոյր մը և անթերի կատարելագործութիւն մը՝ որոնք աւելի բաղձալիին մտածել չեն տար :

Արդէն Նուազահանդէսէ մը պահանջուած բոլոր աս առաւելութիւններուն համար չէ՞ որ, ամէն տարի աս ցերեկոյթը հաճոյքով կը պատուեն ո՛չ միայնակ հայ հալ-լայֆը, այլ նաև բարձրաստիճան օտար անձնաւորութիւններ :

* * *

Առանց չափազանցած ըլլալու կրնայ ըսուիլ որ՝ յաջող էր ան ընտրանքը, որով Մասնախումբը կազմած էր աս տարուան Նուազահանդէսին յայտագիրը, որ կը բաղկանար երաժշտական դասական, բարձր, իւրթիւն ու անմատչելի կոորդինէ աւելի, ամէնուն հասկնալի զուարթ ու թրթռուն կոորդինէ՝ ուրկէ կրնային ոչ-երաժշտագէտ անհատներ ալ բան մը հասկնալ :

Յայտագիրին առաջին մասը կը կազմէր Կայս. Համլիտիէ. Քայլերդը, զոր նուազախումբը միահամուռ բարձր ոգեւորութիւնով մը նուագեց, և որուն հանդիսականները ունկնդրեցին յոտնկայս :

Քանի տարիներէ ի վեր, հայ արուեստատագէտներու՝ Նուազահանդէսին մէջը լայն բաժին մը չունենալու դանդաղը, աս տարուան նուազահանդէսով իր լրացումը կը գտնէր, մասնակցութիւնովը Պ. Արամ Ֆնտրդլեանի և Մոլտովաք ու Աթինէ Տատեան օրիորդներուն, որոնք մասնաւոր փայլ մը կուտային ցերեկոյթին, իրենց հայ արուեստագէտի հրապոյրով :

Չայնական երաժշտութեան հանդէպ՝ մեր մէջը ցոյց տրուած ուշադրաւ անսարքերութիւնը, և բոլոր զեղարուեստներուն մէջը անմեկնելի կերպով լքուած տարր մը մնալը, ա՛լ աւելի աչքառու կը դարձնէր դերը Պ.

Ֆնտրդլեանի, որ յաջողապէս ու ձուի (riche) ձայնով մը՝ երգեց չորս կոորդինէ, — Մասսընէի՝ Pensée d'Automne, Կուպլիէի՝ Le Crêdo du Paysan, Վալնէրէի՝ ռօմանս մը, Օկրուդա Հօլմի (Chanson Populaire, արժանանալով համակրական «կեցցէ»ներու և բուն ծափերու :

Իսկ Օրիորդ Մոլտովաք, դեռատի արուեստագիտուհին, մասնորու և ճպտի ձայնով թրթռացումներով, մեծ յաջողութիւնով ջութակի վրայ նուագեց՝ Տ'Ամպրօզիօր Canzonetta, Հիւպէրի Les Fileuses, արժանանալով խանդավառ ծափերու, ծաղկեպսակի մը, և bisի :

Նուազահանդէսին մասնակցող հայ արուեստագէտներէն երրորդը, Օրիորդ Տատեան, սլէկ հասակով դեռատի աղջիկ մը, հովանուտ պուրակներու խորը, վարդերու և շահգրամներու ծոցին մէջը ընկող մանած նուագելու ճշմարտապէս բանաստեղծական պատրանքը կուտար, երբ մանօլիկին մեղամաղձոտ, հիւանդ շեշտերը կը թրթռացնէր, Ֆաուստի և Այսաի կայտուուն յանգերը ի յայտ բերելով, թէպէտ մանօլիկը ինքնին շատ յարմար չըլլայ աղ բարձր կոորդիններուն հարադատ արտայայտութեանը համար և շատ բան կորսնցնէ իր անարձագանգ, մարդ, ընդհատ խաղերովը :

Եւրոպացի սիրուած արուեստագէտներու ցանցաւորութեանը համար, ճշմարիտ ցնծութեան և խանդավառութեան շարժառիթ մըն էր, — ինչպէս զգալապէս յայտնուեցաւ աղ բանը հանդիսականներուն դէմքին վրայ, — ծանօթ դաշնակահար Հէկէի մուտքը բեմէն ներս :

Հէկէ ճշմարիտ ու արուեստին հոգեւին նուիրուած, անո՛վ ապրող, անո՛վ տառապող, անո՛վ երջանիկ արուեստագէտ մըն է, որուն նուաղումը՝ դաշնակին վրայ, կատարելալ մարտնչում մըն է, պայքար մը, հատնում մը, իրենց լուակեաց անձայնութեանը մէջը, անհղի խաղերուն հետը Հէկէ, իր արուեստագէտի հրապուրիչ ձեւերովը, խանդառ ոգեւորութիւնով մը, կենդանացուց Շաֆինատ կին երաժշտագէտին՝ լալկան, մեղամաղձոտ Առուճը, և Բօլսինիէն ու Շօքէնէն երկու


անհափ դժուարութեան անհափ խռովիչ կտորներ։
Նուագահանութիւնն ըստ որդիութեան հանգա-
մանքներուն մէջը, ուրիշ բան մըն ալ որ
գիտելի էր, նուագախումբին, —որուն կազ-
մակերպողն էր Մանթաթրօ Մանաս, —կը մաս-
նակցէին բազմաթիւ հայ երաժշտասէրներ,
ջութակով։

Երաժշտութեան, մեր երիտասարդներուն
կողմէ ցոյց տրուած աս մշակումը, —ամէնէն
կարեւոր նուագախումբի մը կարենալ մաս-
նակցելու աստիճան, —ամէն կերպով ուրա-
խաւիթ երեւոյթ մըն է մեզի համար, և մի-
անգամայն յուսադրող՝ աւելի լայն առաջա-
ցումին՝ գեղարուեստի աս ճիւղին, որուն ահը
արթնցնելու նպատակը ունի արդէն Հիւան-
դանոցի տարեկան Նուագահանութեան, որչափ
ունի նպատակը՝ բարեգործական նպատակա-
ւաքութեան մը։

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԳԱԻԱՌԻ ԿԵԱՆՔԷՆ

ՎԵՅՅԱԶԱՐԵԱԿՆ ՈՒ ԹՂԹԱՐԱՐԻ



Ի

Երբ տունը հիւր չունենար, ինքը անձամբ
կ'ընէր գիւղեր՝ թէ՛ թղթարարութիւն և թէ՛ ժո-
ղովարարութիւն ընելու։ Անձարակ թղթարար
էլ չէր։ Թուղթ կը մրտտէր բաղդի, սիրոյ,
ատելութեան, կապ ու արձակի (նոր հարսի—նոր
փեսայի) ամէն տեսակ հիւանդութեանց, ան-
զաւակներու, վարուցանի, աչքառութեան
(ակնահար), հաւորիքները, փառանքները (գա-
ղան) կը կապէր։ Զրիճ ծամոզն անգամ անկէ
կը քշար. ու գիտուն, անգէտ, համբայ,
սնանկ, քաղքցի ու չինական, թղթեր կու-
տային գրել կանխիկ ժամուցներով, առատ
փոխարկութեամբ։ Ամէնէն չքաւորներն իսկ
գարտակ ձեռք անոր առջև չէին ելնար։
Թղթարարները՝ վաղուց նախապաշարեր էին
ժողովուրդը, թէ առանց աղ ու մատաղի,
առանց գոհացուցիչ հաաւցումի թուղթ ու
թիւմը՝ անկատար անընդունակ պիտի մնան։
Բանն հոն էր, որ Տէրտէրը եթէ կը չահա-

գործէր այս արհեստը, բայց արուեստակեալ
մը, խաբեբայ մը չէր, որովհետեւ ինքն էլ սր-
տանց կը հաւատար վեցհազարեակին և անոր
գաղանի զօրութեան, ու վիճկարի արտա-
ռոյց արարողութիւնները խորին ջերմեամբ
գութեամբ կը կատարէր։

Հրաշահոսան իր գրքերը—ձեռագիրները
անտուկի մը մէջ, բաճալիի ներքեւ էին։ Իրմէ
զատ՝ միայն երէցիկներ կը տեսնէր անտուկին
պահուած տեղը, ուրիշ Ագամորդի չպիտի
գիտնար։ Երեւակայական գաղանիքը իր մօտն
էր. ուրիշ մը չէր վստահէր, և ոչ ոքի կը
յայտնէր։ Հետաքրքիրներէն էլ փողպատ ա-
զատելու համար կ'ըսէր—«Երեւոյցած եմ ոչ
ոքի յայտնելու, հակառակ պարագային՝ դեւ-
երը կը պատժեն զիս, թէ՛ գործածողն ալ
այսահար պիտի ըլլայ, և թէ՛ ծանր զարու-
րելի արհեստ է, ամէն մարդու գործ չէ՛, ա-
նոնց միայն որոյ տուեալ է ի վերուստ։»

Նա՛ անայլայլ վստահութեամբ կը հաւա-
տացնէր իրեն գիմոզները թէ՛ իր թուղթն,
աղօթքը անվրէպ նպատակին կը հասցնէն։
Միջնորդն ու միջնորդեալք ջերմ հաւատա-
ցողներ էին վեցհազարեակի զօրութեան...
միայն թէ... միայն թէ՛ կը դանդաղէին—
Տէրտէրը՝ թէ և ծով ու ցամաք կը քննէ,
այլ՝ աչքձակ—աչա՛հ է, հօրը գերեզմանն
անգամ՝ անվարձ փորել չպիտի։

Իր զօրաւոր համբաւին պատճառով՝ բազ-
մաթիւ տիրացուներ, այլ և այլ տեղերէ իրեն
աշակերտութեան եկան. սակայն մերժելով
մերժեց, հակառակ անոնց պնդերես թա-
խանձանքներուն և առատ խօստմունքներուն։

Զէր ուղեր որ կարդացող, տիրացու իր
հանտաւորիք (տնէն ներս) փէլայ, կը վախ-
նար որ ձեռքէ հանէ արհեստը կամ գողցնէ
իր անգիւտ—աննամանակ գրքերը։ Ատոր հա-
մար պարզ մշակ էլ չէր պահէր տունը։ Բը-
նական է որ տարիքը կը հակադէպ ուժին ու
զայն օրէ օր կը սկաւաղցնէ, մանաւանդ երբ
որ մարդ 50ն անցուկ է։ 60 տարեկանէն վերջ,
տէրտէր ու երէցիկն զգացին որ է՛լ պէտք
ունին պրեկուրի մը (պղտիկ ծառայ), ուստի
վնտրուելով գտան որբ տղայ մը, Մարտօ
անուր, ասպնով ըլլալով որ գիր կարդաւնք
չգիտէր։ Մարտօն 15 տարեկան էր։ Հակա-

ուակ տէրտէրի հետաքրքրութեան՝ նա գիտէր
գիր—կարդաւուք ու կրնար հեգել—հասկնալ
ձեռագիրներ :

Տէրտէրի գեանաւոր տունը չորս մասի
րաժնուած էր, մէջէ մէջ : Պղտիկ բաց—բակէ
մը կ'երթացուէր սրահը, որուն մէկ մասը
վերածեր էին խոտանոցի, յարդնոցի և յանոցի :
Տան դուռը սրահին մէջ կը բացուէր, ուրկէ
ներս էին պղտիկ թոնրատունը և ակոռը :
Ախոռի մէկ նեղ անկիւնէն կ'ելնուէր պտը-
տիկ խուց մը, որ Տէրտէրին առանձնարանն
էր : Հոն կը զբաղէր վեցհազարեակով ու
թղթարարութեամբ :

Մանենք հոն :

Հինգ ոտք լայն, ութ ոտք երկայն չէնք
ւնն էր, պատերը հազիւ մարդահասակ մը, ու-
րոնց վրայ նստած էր առիքը : Սիւն չկար :
Դրան ճիշդ դիմացը կ'երեւար բուխերիկը,
ուր միշտ կը մխայլն ցանէ և թեթրինէ կը-
րակները, որոնք շարունակ վառ կը պահուէին
Տէրտէրի չիպուխիս և թէ՛ թղթարարութեան
համար հարկաւոր եղած ծխանելիքներուն
գործածուելու : Տախտը խոնաւ էր, որովհետեւ
կրնանք ըսել թէ՛ արեւու լոյսը հոն չէր մը-
տած : Լոյսը կ'առնուէր՝ ակոռի երթիքին
դիմաց խուցին մէջ բացուած պատուհանէ
մը : Եթէ բուխերիկն ու պատուհանը չըլլա-
յին՝ օդ ըստւածը չպիտի խաղար հոն : Գրէթէ
փռւածք չկար հոն, միայն բուխերիկի մէկ
անկիւնը կակուղ խոտի խուրձի մը վրայ
պարզուած էր արջենի մորթ մը, որուն վրայ
ծնրամած կ'աշխատէր Տէր Թորէն : Բուխե-
րիկի քովիկը կար նաեւ աչկունք (փոքր պա-
տուհան մը) որ կը գոցուէր տախտակէ դռ-
նակով մը, ջուխթ մը բանլիքի ներքեւ : Վեց
հազարեակը, Ռամ արկանելոյ գիրքը, ուրիշ
ձեռագիրներ (ըստուրապ, վիճակացոյց են) :
զաղտնի պահարաններու մէջ էին, պէտք և-
ղած ատեն միայն դուռը կը հանուէին : Ընդ-
հանրապէս արջենի մորթին բոլորակը կը
տեսնուէին՝ Սաղմոս մը, Նարեկ մը, ձեռա-
գիր Էֆէմերովն, ու թղթարարութեան հա-
ւաքածոյ ձեռատետրին մօտ՝ ջրով լեցուն
բարձ մը : Իսկ ծխանելիք, թուղթ, դալլամ
և տիլիթ շարունակ վրան կը կրէր տէր
հայրը :

Մշակ Մարտոն հազիւ ամիս մը կար, որ
մուտ գտած էր հոն : Խոնարհ, խոհեմ ու աշ-
խատասէր ընութքի մը տէր ըլլալով՝ տէր-
տէրի և երէցկնոջ աչիւն մտեր էր—անոնց
սիրտը գրաւեր էր : Քանի որ տաք էին օդե-
րը, Մարտոն սրահը կը մնար գիշերները : Տէր
Թորէի տուն ինքնակամ ծառայութեան եկած
էր խոտալիկի մը պէս, յուսալով որ պիտի
բաղդաւորի անոր ծով գիտութենէն կաթիլ
մ'ընդունելու, թէեւ այդ մասին բան մը չէր
ըսած կանխաւ, ոչ թէ խորամանկութենէն,
այլ ամօշնալէն, գիտուն տէրտէրի մը առջև՝
կարդալ գիտեմ ըսելը կը վայլէր Մարտոյի
նաման տիրացուի մը : Եւ արդէն Տէր Թորէն
կրեք չպիտի ընդունէր զինքը, եթէ տիրա-
ցու ըլլալը կռահէր : Առջի օրէն կրք որ տուն
բերաւ, երէցկնոջ ներկայացուց զայն և հան-
դիսաւոր պատուէր մը տուաւ՝ աջ—ձեռքին
կարկառումը՝ որ ամենեւին տէրտէրի գրքին,
թղթին, դալլամին, բանուգործին չխառնուի,
մի միայն զբաղելով իրենց ցոյց տրուած դո-
ծերովը : Աս՝ բաւական եղած էր, Մարտոն
խելքի բերելու : Այնքան կը սոսկար Տէր
Թորէն, որ երբ տան մէջ՝ մինակ մնացած
ատեն հանգպէր անոր գրքերուն ու թղթե-
րուն, որոնց կարօտովը կ'եփէր, աչքը կը
փակէր չտեսնելու համար և անմիջապէս խոյս
կուտար : Սակայն տէրտէրի այս խստութիւնն
իսկ անգուսպ փափագ մը առաջ բերաւ
Մարտոյի սրտին մէջ, անդիմադրելի ձգտում
մը ու տիրացուն՝ ոչ գիշեր՝ գիշեր, ոչ ցորեկ
ցորեկ ունէր, յափշտակուած էր այդ համբա-
ւաւոր գրքերու գաղանիքներով :

Երեք ամիս վերջ, ցուրտերը սկսած էին
ու Մարտոն ալ փոխադրուած էր ակոռը,
կովի մսուրին քով չինուած հողէ նստարանին
վրայ, ուր կ'անցունէր գիշերը : Իր ննջարանը
մօտ էր այն մթնշաղ պատուհանին, որ կը
բացուէր խորհրդաւոր խուցին մէջ : Հիմայ
աւելի մօտ էր վեցհազարեակին ու գրքերուն,
հետաքրքրութիւն պոռթկալու աստիճան :

ԳԵՂԱՄ

Յաջորդ թիւով՝ մեր բարձրէն յոյժ չա-
հեկան Նորայիպ մը՝ ՏՕՄԻՆՕԷ, և Արման
Սիլվէսդերի մէկ բանաստեղծութեան թարգ-
մանութիւնը՝ ՕՐ. ՄԱՌԻ ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԵԱՆԷ :

ԹՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԿԱՐՅՈՒՈՐ ԵՐԿ ՄԸ

Տոքթ. Վահրամ Թորգոմեան, որուն բա-
նասիրական ու կենսագրական երկասիրու-
թիւնները կարեւոր շարք մը կը կազմեն՝
նոյնքան պատուաբեր իրեն համար որքան
չահեկան ամէն գրասէրներու համար, այս օ-
րերս ալ աւարտեր է ձեռագիր աշխատու-
թիւն մը, ֆրանսերէն լեզուով, որ Գիտական
Կաճառի մը պիտի ներկայացուի: Ներկայ
ապրիլ 25-ն Թ Հռոմի մէջ գումարուող «Պատ-
մական Գիտութեանց Միջադպային Համա-
ժողով»-ին բժշկական ճիւղի դիւանը մասնակ-
ցութեան հրաւէր ուղղած ըլլալով նաև Տօքթ.
Թորգոմեանին՝ իբրև անդամ Բարիդի «Բժշ-
կական պատմութեան ֆրանս. ընկերու-
թեան», ուսումնասէր բժիշկը ձեռնարկած էր
պատրաստելու կենսագրութիւնը այն հայ
բժիշկներուն որոնք Իտալիոյ Համալսարան-
ներէն վկայական ստացած էին 1700-էն մինչև
1840 որոնց թիւը կը հասնի քսանի: Այս
կենսագրական աշխատութիւնն է ահա զոր
Տօքթ. Թորգոմեան զրկեր է յիշեալ Համա-
ժողովին որ տարակոյս չունինք թէ արժա-
նաւորապէս պիտի գնահատէ զայն:

ՅՈՒՅԱՆԱՆԵՐԻ ԶՈՐԶԸ

Գրական ու կրթական վաստակաւորներու
յորելեանները տօնելու սովորութիւնը՝ տա-
կաւ տակաւ կ'ընդհանրանայ մեր բարձրուն
մէջ: Այս անգամ երկու հեռաւոր միջավայ-
րերէ կը հասնին քաւորդ և կէս դարու յո-
րելեաններու նախապատրաստութեան լուրեր:
Վանայ մէջ, Երամեան վարժարանին նախկին
սաները ձեռնարկած են տօնելու այդ հա-
ստատութեան հիմնադիր-անօրէն Երամեան
էֆ. ի 25 տարուան կրթական գործունէու-
թեան յորելեանը, հաւանութեամբ Ս. Պատ-
րարքին և Կեդր. Վարչութեան որոնք քա-
ջալրանքի արժանի դատած են այդ բազմ-

մաշխատ դաստիարակը որ իր աչքերուն լոյ-
սէն զրկուած՝ համակիր կարեկցութիւն մը կը
հրաւիրէ իր վրայ: Յորելեանին դրամական
արդիւնքը պիտի յատկացուի Երամեան վար-
ժարանին վերաշինութեան:—Երկրորդ յորել-
եանն է Երեւանի թեմական դպրոցի տեսուչ
Պ. Մկրտիչ Պալեան որ յիսուն տարիէ ի վեր
արդիւնաւորապէս ուսուցչական պաշտօն վա-
րած է Ռուսահայ վարժարաններու մէջ: Եր-
եւանի թեմական դպրոցին տեսուչ Գարեգին
վրդ. գրաւորապէս հաղորդելով այս փա-
փագը՝ Ս. Պատրիարք Հօր օրհնութիւնը և
բարոյական օժանդակութիւնը խնդրած է:

—Երրորդ յորելեանի մըն ալ տօնման խոր-
հուրդը կայ որու մասին տակաւին որոշ բան
մը չենք կրնար ըսել՝ գաղափարային վի-
ճակի մէջ ըլլալուն համար. բայց այնքան
ինքնատիպ է ու եղական, որ կ'արժէ գէթ
հակիրճ յիշատակութիւն մը ընել: Կեդր. Ու-
սումնական Խորհուրդը տրամադրութիւն ունի
կ'ըսուի, յիմնամեայ յորելեանը տօնելու Պոլ-
սահայոց առաջին Ուսումնական Խորհուրդին
հաստատման, որ կը լրանայ այս տարուան
մէջ:

ՅՈՒՅԱՆԱՆԵՐԻ ԶՈՐԶԸ

«Տեղւոյս ամերիկեան Միութեանարութեան
կեդրոնին մէջ,—կը գրէ մեզ Ուրֆայէն՝ Գ.
Կ. Ո. մարտ 8 թուականով,—քանի մը օր
առաջ Միս Շաթըզ բացած էր Ս. Գրքի և
ուրիշ կրօնական պատկերներու՝ ինչպէս նաև
քննադատական աւարկաներու համեստ ցու-
ցահանդէս մը: Իր հրաւերով՝ մեր երկսեռ
վարժարանաց բարձրագոյն դասընթացքին
հետեւող կարգերն ալ օր մը այցելեցին հոն
ու աչքէ անցուցին աւարկանները: Աւելի հե-
տաքրքրականն այն էր որ Միս Շաթըզ ու-
րիշ օր մը Ասեղնադործութեան աշխատանո-
ցին հարկւրաւոր գործաւորութիւնն ալ այդ-
չէնքը հրաւիրելով՝ երկայնամօրէն անոնց բա-
ցատրած է ցուցադրուած աւարկանները ու
ճաշով մըն ալ մեծարած է այդ բազմաշխատ
Հայուհիները»:

—Պարտիզակէն Արեւելի ուղղուած ըն-
դարձակ թղթակցութիւն մըն ալ կը նկա-
րագրէր Մոզական—Լապտերի այն ցուցա-
դրութիւնը զոր նախորդ չարթուն կատարած

է Տօքթ. Յովս. Տէր-Ստեփանեան՝ Բարձրագոյն Վարժարանի սրահին մէջ, դպրոցական ուսանողներու և բազմաթիւ հրաւիրեալներու ներկայութեան, անոնց աչքին պարզելով հետաքրքրաշարժ վայրերու տեսարաններ ու ծանօթ՝ անձնաւորութեանց դէմքեր, հակիրճ բացատրութիւններով զորս կուտար իւրաքանչիւրին վրայ:

ՈՏԱՆԱԻՈՐԻ ՄՐՅՈՒՄ

ՅԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

Մասիսի Տրդ. թիւով (22 Փետրվ.) մեր հրատարակած Խմբագրական Յայտարարութեան համաձայն՝ այսօրուէն (22 Մարտ) կը սկսինք ընդունիլ Ոսանաւորի Մրցման ենթակուէրէք ձեռագիրները: Որ և է թիւրիմացութեան տեղի չի տալու համար՝ հարկ կը համարինք հակիրճ կերպով անդամ մըն ալ կրկնել պայմաններն այս գրական մրցման որուն նպատակն է քաջալերել՝ բանաստեղծութեան հակում ունեցող նոր գրիչները իրենց նախաորոշման մէջ:

Գրուելիքը պիտի ըլլայ սիւրային բանաստեղծութիւն մը՝ նիւթ ունենալով ԲԱԺՆԵԼԻԱՍԵ ՍԻՐՏԵՐԻ՝ ի՛նչ չափով ու ձեւով որ ուզուի, ուրիշ տողը չանցնելու պայմանաւ, թէև կրնայ չա՛տ աւելի կարճ ալ ըլլալ, — վասն զի ոտանաւորին երկարութիւնը չէ որ պիտի կազմէ Գրիչներուն գնահատման հիմը:

Ձեռագիրները կ'ընդունուին մէկ ամուսն միջոցի մէջ, այսինքն մինչեւ Ապրիլ 22: Իւրաքանչիւր ոտանաւորի հետ, միեւնոյն պահարանին մէջ պէտք է դրուած ըլլայ փոքրիկ գոց պահարան մը, հեղինակին անունը, մականունը ու հասցէն պարունակող:

Մասիսի Խմբագրութեան հրաւերով՝ այս Ոտանաւորի Մրցման քննիչներն ըլլալ յանձն առած են մեր երեք տաղանդաւոր վարպետները Բանաստեղծութեան,

Տեա՛րք

ԱՂԵՔՍԱՆԴԻ ՓԱՆՈՍԵԱՆ
ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

Երկու սեռէ ամէն կարգի գրողներ կրնան մասնակցիլ այս Մրցման որուն արդիւնքը պիտի ծանուցուի Մայիսի սկիզբները, և լաւագոյն դատուած Ոտանաւորին հեղինակը պիտի ստանայ, իրբև Մրցմանակ, ՈՍԿԻ ԳՐԻՉ մը:

Խմբագրութեան կողմէ, բացառաբար, մէկ—երկու արժեքաւոր առարկաներ ալ պիտի կրնան յատկացուիլ՝ իրբև Բ. և Գ. մրցանակ՝ այն ոտանաւորներուն որոնք առաջինէն անմիջապէս ետքը դատուին ու մասնաւորապէս գնահատուին Գրիչներուն կողմէ:

Ձեռագիրները պէտք է ուղղուին սա միակ հասցէին. — Խմբագրութիւն «Մասիս», Ղալաթիա, Քամանիս փողոց, Թ. 8, Կ. Պոլիս: — Նամակները recommandé ընելու պէտք չկայ, վասնզի անկորուստ կը հասնին:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կիրակի օրը Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին մէջ հանդիսաւոր կերպով կատարուեցաւ յուղարկաւորութիւնը Տիկին Թագուհի Գ. Սէլիմիյէճեանի, ցաւակից աղքատիկաներու և բարեկամներու ներկայութեամբ: Հանգուցեալ Տիկինը, ամուսին Գրիգոր Էֆ. Սէլիմիյէճեանի և հօրաքոյր Տիկին Գրիգոր Խան Շամտանճեանի և Աղեքս. Էֆ. Փանոսեանի, ազնուատոհմ ընտանիքի մը չառաւիղն էր, բարի և առաքինի տանտիկին մը որուն մահը խոր սուգի մէջ կը թողու իր բոլոր պարագաները: Այս տիտուր առթիւ մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք վշտահար ամուսնոյն, զաւկին՝ Տիկին Վերթինիի, ինչպէս նաև Փանոսեան ու Շամտանճեան ընտանիքներուն:

Ստացանք փաստարան Կ. Սօլախեան Էֆ. Ի հեղինակած Վանառականի մը ուղեցոյցը անուն գիրքը, որ Օամ. Օրէնքներու հաւաքածոն է, ամէն դասակարգի ընթերցողներու համար օգտակար: Կը գտնուի ամէն գրադատներու քով:

Արտօմսէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵՍՆՔ, ՓՈՍԽԻՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՏՔ

Ընկերության դրամագլուխը, ամբողջապես վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնասեւի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մաֆասան հին տեղը
Ընդհ. Բնակիչ Ընդհ. Գործակալ
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարեալագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԷՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԱՐԱՍ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱՆԱԹԱՍ

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը
2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԼԻՍՍԻ

2աբշը Պոյու, Թ. 120.

Դամերը եւ նորոգութիւն օրի.

Կասաբեալ Երաշխաւորութիւն:

Մասնաւորապէս գաւառաց բոլոր հաղաճներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեղծ վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղոյլուի տունը:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻՒՆԻՕՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
գրասենեակները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ նորալէն Բաթըրճի Օղլու
Բասարը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

Դե. Ե. Ե. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան Ժ. 11½
Բե. Դե. Ուր. օրերը 6եմ մինչեւ 11½
Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(Վկայեալ Բարիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հի-
ւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժա-
կան գործողութիւններ՝ վերջին կատարելա-
գործեալ դրութիւններով:

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն
մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքս-
քերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնա-
կան ու փորձառական երկար ուսումնասի-
րութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ.
Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա,
Թարլա Պաշը, Թիւ 136:

Մանօք. — Հիւանդներ կ'ընդունի ամէն օր
կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը
1-4 (Ը. Ե.): Երեքշաբթի օրերը միեւնոյն
ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հի-
ւանդները:

11—20

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

ԿԵՆՍՅ ԶԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրեցող կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ՁԷ ԴՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի
ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation
des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

ԹՈՒՐԿԻՅՈՒ ԵՒ ԱՐԵՒԵԼՔԻ ՏԵՐԵՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասամ Բաթրըն Օղլու

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ